

րիւն, մարմար, ոսկի, ապրշում ու բեհեզ, մեղձ ու ապաշ-
խարանք, յոյս, երագ, տառապանք եւ սփոփանք – բոլոր
մարդկեղէն հաստատ տախտակներու, ձեւերու վրայով:
Մեր կողմէ՝ մեր յօրինած, բանաձեւած հակազդեցութիւն՝
մեզ ընկնող օրէնքներուն դէմ, մեր ծարաւին՝ արդարու-
թեան, բարութեան, խաղաղութեան, երկինքէ: Դպրեվանքի
այդ տարուան մը դասերէն իմ մէջ միակ անուն մը կ'ապրի
այսօր, եպիսկոպոսի մը անունը, Աղբիանոս: Ու չեմ ալ
գիտեր, թէ ո՞ր հրաշքը միջամտեց, որպէսզի այդ մէկ հատիկ
բառը ազատէր ընդհանուր սուգումէն...

Քսանը չէի մտած ես այդ օրերուն: Ահաւոր տետ-
րակները իրենց չարիքը տարածեցին մեր հին մատենագիր-
ներէն իմ ընթերցումներո՛ւն ալ վրայ: Կարծես նոյն ապի-
մաստութիւնը հասարակաց բարեխառնութիւն ըլլար մեր
պատմագիրներուն (աւելի վերջը մատենագրական հետա-
քննութիւններ պիտի յաջողէին սրբագրել պատանեկան այդ
սպաւորութեանց անարդարութիւնը ու ես պիտի հասկնայի
մեր մատենագիրները, իրենց բոլոր մեղքերուն հակառակ,
դա՛րձեալ իբր վկայութիւններ, միշտ իմ ժողովուրդէս, գոր
իբ դժբախտութիւնը կ'ընէր կրկնապէս սրտառուչ ու յան-
կուցիչ): Ուրիշ ազգերու պատանիները իրենց անցեալէն
ո՛չ թէ կը վոնտուէին, այլ կը քաշուէին: Մեզի համար հա-
կառակն էր, որ տեղի կ'ունենար: Վանուած այդ աշխարհէն,
ստիպուած էի դառնալ ներկային: Այդ ներկան՝ 1900ը: Կա-
տարուած էր մեր մատենագիրներէն ողբացուած աւերած-
ներէն մէկը, անոնց չափ ընդարձակ: Ու մա՛նաւանդ, թուղ-
թերէ վեր իրականութեամբ մը: Աղէտը քսուած էր մեզի:
Տեղ մը պատմեր եմ, թէ ինչպէս Աստուածածնայ տօնին
յաջորդ մէկ գիշերին մեր գեղը վագած էր ժամ, արդա-
րի-մեղաւորի բաժնած կրակին ջուրը, որպէսզի անով օժ-
ւած այրէինք՝ թշնամիին չյանձնելու համար: Այս բաները
կը պատմուին տխրութեամբ: Թող բախտը խնայէ ձեզի ու
ձեր գաւակներուն՝ զանոնք ապրելու անորակելի պահը:

1900էն քիչ վերջն էր, վանքէն փախուստիս հետեւող
քանի մը տարիներուն, որ ինձի տրուեցաւ խելամուտ ըլլալ